

Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի պարզաբանումները

«Հայաստանի Հանրապետություն» թերթին

Հայրենի գիտությունը՝ պետական կոմիտեի տանիքի տակ

Թեմատիկ ֆինանսավորումը՝ աշխարհում ընդունված մոտեցումներով

Ռեսուրսներ չունեցող երկրի համար գիտության զարգացումը չափազանց կարևոր է: Չի կարելի ասել, թե անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունում գիտության բնագավառը անուշադրության է մատնված: Բայց և ակնհայտ է, որ այս ոլորտում անելիքները չափազանց շատ են, մասնավորապես գիտության արդյունքները արտադրությունում կիրառելու, գիտելիքի վրա հիմնված տնտեսության զարգացման առումով: Նախորդ՝ 2007 թվականին ՀՀ կառավարությունը հաստատեց գիտության բարեփոխումների հայեցակարգը, եւ այժմ խնդիրը ըստ այդ հայեցակարգի՝ հետագա տարիների համար գործողությունների ծրագրի մշակումն է: Այդ պարտականությունը դրված է գիտության եւ կրթության ոլորտում նույնպես նախորդ տարի ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծված ՀՀ գիտության պետական կոմիտեի վրա, որը գործում է ՀՀ ԿԳ նախարարության կազմում: Կոմիտեի նախագահ **Սամվել Հարությունյանը** կարծում է, որ իր էությանը լիարժեք համապատասխանելու եւ նպատակին ծառայելու համար այն պետք է ստանա ՀՀ կառավարությանը կից գործող կառույցի կարգավիճակ: Սակայն մինչ այդ կոմիտեն չի պատրաստվում ձեռքերը ծալած նստել եւ ձեռնամուխ է եղել ոլորտի համակարգման գործին: **«Անկախացումից հետո գիտության բնագավառում ծրագրային մոտեցումներ՝ նոր պայմաններին համապատասխան, չեն եղել: Արդյունքում՝ գիտությանը տրամադրվող ոչ մեծ գումարները բաժանվում էին հիմնականում ճյուղային նախարարությունների միջոցով, որի դեպքում անհնար է բացառել սուբյեկտիվ գործոնները: Ստացվում էր այնպես, որ հաճախ անհամեմատ ավելի որակյալ գիտական արդյունք տվող հիմնարկները գտնվում էին ավելի վատ վիճակում, քան առավել պասիվ գիտական հիմնարկները»**,–ասում է **Ս.Հարությունյանը**: Նորաստեղծ գիտական կառույցը գիտության կառավարման համակարգում միացյալ քաղաքականություն մշակելու եւ բոլոր գիտական հիմնարկների հանդեպ միասնական մոտեցում ցուցաբերելու ոչ այնքան հեռահար նպատակ է հետապնդում: Եթե կոմիտեի խնդիրներից մեկը գիտությանը հատկացվող գումարների ճիշտ բաշխումն է լինելու, ապա մյուս կարևոր խնդիրը լինելու է գիտությունը երիտասարդացնելու, երիտասարդներին գիտության հետ կապելու որոշակի քաղաքականության մշակումը: Բանն այն է, որ գիտությունը երիտասարդների համար դարձել է ոչ գայթակղիչ: Պատճառներն ակնհայտ են՝ աշխատավարձն է ցածր, հեռանկար չեն տեսնում եւ այլն: 2008—ի կեսերին կհայտարարվի մրցույթ՝ երիտասարդ գիտնականների համար: Ապագայում, հավանաբար այս տարվա աշնանը, կստեղծվի գիտության աջակցության հիմնադրամ, որը դրամաշնորհներ կտրամադրի մինչեւ 30 տարեկան երիտասարդ գիտնականներին, որոշակի միջոցներ կտրամադրի համաֆինանսավորման սկզբունքով միջազգային դրամաշնորհների համար: Հիմնադրամում կնախատեսվեն գումարներ՝ գիտական սարքավորումներ ձեռք բերելու նպատակով: Հիմնադրամի միջոցները կձեռավորվեն պետական բյուջեի, ինչպես նաեւ մասնավոր անձանց հատկացումների շնորհիվ: Այսօրվա կարևոր խնդիրներից մեկը գիտության պետական կոմիտեի նախագահը համարում է բոլոր գիտական հիմնարկների աուդիտը: «Անկախացումից հետո մենք չգիտենք, թե ինչ է մնացել, ինչ ունենք եւ ինչ ենք ուզում անել ապագայում: Պետք է նաեւ պարզել՝ արդյոք ինստիտուտներին հարկավոր են այնքան հաստիքներ, որքան կան: Հաճախ դրանց թիվը շատ ավելի մեծ է, քան տվյալ ինստիտուտի գիտական արտադրանքը: Քաղաքականության մշակման համար պետք է ունենալ նախնական տեղեկատվություն, որի հիման վրա կարելի է ապագայի պլաններ մշակել»:

Մամվել Հարությունյանի խոսքով՝ խորհրդային ժամանակներում Հայաստանի գիտությունը տարեկան շուրջ 400 մլն դոլար տարեկան ֆինանսավորում էր ստանում, ընդ որում, դրա մեջ չեն մտնում ռազմական գիտությանը տրամադրվող գումարները: Այսօր մեր գիտության բյուջեն մոտավորապես 25 մլն դոլար է: Իսկ ինստիտուտների թիվը նախկինի համեմատությամբ ավելի մեծ է: Բնականաբար, այդ գումարը չի կարող բավարար լինել, որպեսզի բոլոր այդ ինստիտուտները եւ տնտեսական ծախսերը հոգան, եւ աշխատավարձ վճարեն, եւ զբաղվեն լուրջ գիտությամբ: Հետեւաբար, լուրջ բարեփոխումներ են անհրաժեշտ ինստիտուտների օպտիմիլացման ուղղությամբ: Մասնավորապես, անհիմաստ է ունենալ մի քանի ինստիտուտ նույն ոլորտում: Այդ ինստիտուտները մեծ մասամբ հսկայական, իրենց կարիքներին անհամապատասխան շենքեր են օգտագործում: Իսկ նման շենքերի պահպանման ծախսը գումարների անտեղի վատնում է: Ցանկալի կլիներ նույն ոլորտի ինստիտուտները միավորել մեկ շենքում, իսկ ազատված տարածքներն օգտագործել գիտությանը եւ կրթությանը նպաստող այլ գործունեություն ծավալելու համար: **«Ես ձեզ հավատացնում եմ, որ 25 մլն դոլարը շատ քիչ փող չէ, շատ չի, բայց շատ—շատ քիչ էլ չէ,—ասում է կոմիտեի նախագահը:—Եթե նպատակային կիրառվեն այդ գումարները, ապա կարելի է արդյունքներ ակնկալել: Գիտության արդյունքը ինքնանպատակ չպետք է լինի, այն պետք է կիրառվի եւ ոչ թե մնա թղթի վրա: Ցավոք սրտի, վերջին երկու—երեք ամսվա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գիտական արդյունքների ներդրումային ծրագրերը չեն արվել: Ենթադրում եմ, որ ապագայում նպատակային ծրագրերը պետք է ձեւավորվեն ճյուղային հիմնարկների պատվերներով»:**

Այս օրերին կոմիտեում պետբյուջեի կողմից ֆինանսավորվող թեմատիկ գիտական ծրագրերի ընտրության արդյունքների բողոքարկումն է ընթանում: Ծրագրերի մրցույթի պայմաններից մեկն այն է եղել, որ դրանցում անպայման երիտասարդներ ընդգրկված լինեն: Այնուհետեւ պահանջ է դրված, որ թեմատիկ եւ բազային ծրագրերում կրկնություններ չլինեն: Հաշվի են առնվել նաեւ նախորդ ծրագրի հաշվետվությունները. կատարել է արդյոք գիտնականն իր առջեւ դրված խնդիրը: Թեմատիկ ֆինանսավորման նպատակներից մեկն էլ ժամանակակից ասպարեզների հետազոտումն է: Ժամանակակից չես համարի այն գիտնականին, ով իր աշխատությունում հիմնվում է 70-ական թվականների գրականության վրա: Բնականաբար, այն ծրագրերը, որոնք չեն համապատասխանել այդ պահանջներին, դուրս են մնացել թեմատիկ ֆինանսավորման ցանկից:

Սովորաբար գիտության ոլորտի թեմատիկ կամ դրամաշնորհային ծրագրերը քննարկվում են անկախ փորձաքննական հանձնաժողովներում: Փոքր երկիր լինելու, բոլորը բոլորին ճանաչելու, թե մեկ այլ հանգամանք նպաստել է, որ մեզանում այդ հանձնաժողովներն այլ սկզբունքով կազմվեն: Իսկ դրանից գիտությունը հաստատ չի շահել: Գիտության պետական կոմիտեի նախագահը որոշել է հաջորդ տարվա համար փորձաքննական հանձնաժողովներն ստեղծելիս առաջնորդվել աշխարհում ընդունված սկզբունքներով: Ստեղծել այս կամ այն ասպարեզում լավագույն մասնագետների բանկ եւ առաջադրված թեմաների ընտրությունը վստահել նրանց: Մակայն փորձագետին պետք է ընտրի համակարգիչը, եւ պետք է պահպանվի գաղտնիության սկզբունքը: Որեւէ մեկը չպետք է իմանա, թե որ թեմային որ փորձագետն է ծանոթացել եւ գնահատական տվել: Փորձագետների գնահատականները կամփոփվեն կոմիտեում ստեղծված փոքր խմբերում, եւ ըստ ունեցած վարկանիշի՝ թեմաները կֆինանսավորվեն տվյալ ոլորտին հատկացված միջոցների չափով: Անգամ այս պարագայում կոմիտեի նախագահը չի բացառում սուբյեկտիվ գործոնը: Ելքը միակն է՝ խիստ պայմաններ դնել փորձագետի առջեւ. եթե փորձաքննության կարգը խախտի, կդադարեցվի նրա գործունեությունը:

Քաղաքակիրթ աշխարհում ընդունված այս մոտեցումն իրեն երկար սպասեցնել չի տա. թերեւս փետրվար ամսից կլուծարվեն արդեն ինը տարի գործող փորձաքննական հանձնաժողովները: Երկու-երեք ամիս կպահանջվի, որպեսզի ստեղծվի փորձագետների բանկը:

2008-ի թեմատիկ ֆինանսավորման նպատակով ներկայացված 1050 հայտերում մոտ 6700 անուն է նշված եղել: Պարոն Հարությունյանին զարմացրել է այն, որ նույն մարդու անունը գրված է եղել մի քանի հայտում: Նախ՝ դա արգելված է օրենքով. մեկ անձը իրավունք չունի մեկուկես հաստիքից ավելի զբաղեցնել: Բացի այդ, ինչպե՞ս է հնարավոր միաժամանակ 6-7 թեմայի վրա աշխատել: Ակնհայտ է, որ սա գումարները փոշիացնելու ձեռք է: Թեմատիկ ֆինանսավորման նպատակով ամենաշատ հայտեր ներկայացված են տեխնիկական, բնական գիտությունների ոլորտներում: Այս տարի բավականին մեծ թվով հայտ է ներկայացվել նաև հայագիտության ասպարեզում: Հայագիտության հանդեպ վերաբերմունքն էլ մի փոքր կողմնակալ է եղել՝ համեմատաբար շատ գումար է հատկացվել: Արդյունքում՝ 93 թեմա 257 հաստիքով հայագիտությունից այս տարի ընդգրկվել են թեմատիկ ֆինանսավորվող ծրագրերի ցանկում: Հումանիտար գիտությունների նկատմամբ քաղաքականությունը հետեւյալն է եղել: Քանի որ թեմատիկ ֆինանսավորման աշխատավարձի ֆոնդը շատ փոքր էր, իսկ բյուջեն այս տարի ավելացել է, որոշվել է աշխատավարձերը բարձրացնել 60-70 տոկոսով: Միաժամանակ հաստիքների կրճատման անհրաժեշտություն է առաջացել, քանի որ կրկնությունները, այսինքն՝ նույն անձի զբաղվածությունը տարբեր թեմաներում, անթույլատրելի է: Ս. Հարությունյանը հավատացնում է, որ արժեք ունեցող ոչ մի գիտնական դուրս չի մնացել: Կրճատումներից հետո թեմատիկ ֆինանսավորման ծրագրերում ներկայացված 6700 անձից կմնան եւ կֆինանսավորվեն մոտ 2200-ը՝ անցյալ տարվա 2700-ի փոխարեն:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», 11 հունվարի, երեքշաբթի

Անուշ Սամվելյան